

<b>[1] Դուրս գրման ամսաթիվ</b>			<b>Հաշիվ վավերագիր</b> (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	<b>[2] Սերիա</b>		<b>[3] Համար</b>	
15	Դեկտեմբեր	2022 թ.		Բ		0485976025	
<b>[4] Մատուցման ամսաթիվը</b>				Ճշգրտվող հաշիվ վավերագրի			
15	Դեկտեմբեր	2022 թ.		Սերիա		Համար	
				Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ			
<b>Պայմանագիր</b>			<b>[5] Կերման ամսաթիվ</b>		<b>[6] Համար</b>		
			8 Փետրվար, 2022 թ.		Թարգմանչական ծառայությունների մատուցման պայմանագիր թիվ ՀԳԴ-7-22		
<b>[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)</b>							
Արձանագրություն 13							
<b>[7.1] ՀՂՄ կտրոնի համար</b>							

<b>Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի</b>											
<b>[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)</b>				8	2	2	7	5	6	8	2
<b>[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը</b>											
<b>[10] Անվանումը</b>		ՍՈՖՑԱ ՍԵՐՈՒՑԱՆ Անհատ ձեռնարկատեր (ՍՁ)									
<b>[11] Բանկային տվյալները</b>		Ամերիաբանկ ՓԲԸ					N 1570064545140100				
<b>[12] Գտնվելու վայրը (հասցեն)</b>		ԵՐԵՎԱՆ ՆՈՐ ՆՈՐՔ ՆՈՐ ՆՈՐՔ ԹԱՂԱՄԱՍ ՀՈՎՀ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԹՂՄ. 28 22									
<b>[13] Լրացուցիչ տվյալներ</b>											

<b>Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի</b>											
<b>[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)</b>				0	2	5	0	6	6	3	4
<b>[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը</b>											
<b>[16] Անվանումը</b>		«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅՈՒՆ» Պետական կառավարչական հիմնարկ									
<b>[17] Բանկային տվյալները</b>		ՀՀ ֆին նախ աշխ. գործ. վարչ.					N 900011180081				
<b>[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)</b>		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ Փ. 5									
<b>[19] Լրացուցիչ տվյալներ</b>											
<b>[20] Ում միջոցով</b>		<b>Անուն, ազգանուն</b>									
		<b>Լիազորագիր</b>		<b>Համար</b>							
				<b>Ամսաթիվ</b>							

<b>[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը</b>						
№№ Ը/Կ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Համար միավորներ	Ընդհանուր Ընդհանուր կամ ծավալը կամ ծավալումայած թշանք	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	Թիվ 69109921 քրեական գործով հայերեն-ռուսերեն գրավոր թարգմանություն	Էջ	90	1000		90000
2	Նոդար Գոցիրիձեի վերաբերյալ փաստաթղթերի ռուսերեն-հայերեն գրավոր թարգմանություն	Էջ	31.5	1000		31500
3	13131419/1 քրեական գործով հայերեն-ռուսերեն գրավոր թարգմանություն	Էջ	29	1000		29000
4	22-189-20 վարույթով ֆրանսերեն- հայերեն գրավոր թարգմանություն	Էջ	5	2379		11895
5	Ալեքսեյ Վիտալիի Տյուվիլդինի վերաբերյալ 26.09.2022թ. որոշման հայերեն-ռուսերեն գրավոր թարգմանություն	Էջ	7	1000		7000
6	84111122 քրեական գործով հայերեն-ֆրանսերեն գրավոր թարգմանություն	Էջ	21	2379		49959
7	83154022 քրեական գործով հայերեն-անգլերեն գրավոր թարգմանություն	Էջ	10	1600		16000
8	Ալեքսանդր Ռապեկոյի վերաբերյալ փաստաթղթերի ռուսերեն-հայերեն գրավոր թարգմանություն	Էջ	13.5	1000		13500

9	Նատայա Կորոյկովայի վերաբերյալ ԵՂ/0592/06/22 որոշման հայերեն-ռուսերեն գրավոր թարգմանություն	էջ	6	1000		6000
10	22-38-20 վարույթի նյութերով հայերեն-հունարեն գրավոր թարգմանություն	էջ	33	5300		174900
11	Ալեքսանդր Ռապեկոյի վերաբերյալ 13.10.2022թ. որոշման հայերեն-ռուսերեն գրավոր թարգմանություն	էջ	2.5	1000		2500
12	Ալեքսեյ Տյուվիլդինի վերաբերյալ ՄՀ ԳՂ-ից ստացված գրության ռուսերեն-հայերեն գրավոր թարգմանություն	էջ	1	1000		1000
13	Ալեքսեյ Տյուվիլդինի վերաբերյալ ՄՀ ԳՂ-ից ստացված գրության ռուսերեն-հայերեն գրավոր թարգմանություն	էջ	2.5	1000		2500
14	15888220 քրեական գործով հայերեն-անգլերեն գրավոր թարգմանություն	էջ	9.5	1600		15200
15	Թիվ 12806822 քրեական գործով հայերեն-ռուսերեն գրավոր թարգմանություն	էջ	17.5	1000		17500
<b>Ընդամենը</b>						468454

Ծառայություն  
մատուցող  
(աշխատանք  
կատարող)

SEROBYAN SOFYA 6401890169

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

15/12/2022 11:13:31

Ծառայություն  
(աշխատանք)  
ստացող՝

GRIGORYAN SUSANNA 7403690397

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

20/12/2022 17:30:43

## Որոշում

Թիվ 69109921 քրեական վարույթով թարգմանիչ ներգրավելու մասին

15.09.2022 թ.

ք.Արուսյան

Կոտայքի մարզի դատախազության ավագ դատախազ, երկրորդ դասի խորհրդական Գ.Գրիգորյանս, ստուգելով թիվ 69109921 քրեական վարույթի նյութերը

### Պարզեցի

ՀՀ քննչական կոմիտեում ստացվել է Բելառուսի Հանրապետության գլխավոր դատախազությունից ստացված քրեական հետապնդում իրականացնելու մասին հանձնարարությունը և թիվ 19123050153 քրեական գործի օտարալեզու նյութերը՝ ՀՀ քաղաքացի Սևակ Լևոնի Հովհաննիսյանի (ծնված՝ 31.05.1986թ., հաշվառված՝ Կոտայքի մարզի Արուսյան քաղաքի Սևանի փողոցի 6-րդ միկրոշրջանի 5գ շենքի 13 հասցեում) վերաբերյալ՝ Բելառուսի Հանրապետության քրեական օրենսգրքի 317-րդ հոդվածի 2-րդ մասով (ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ):


Քրեական գործի նախաքննությամբ պարզվել է, որ տուժողներ են հանդիսանում Սվետլանա Վիկտորովնա Մարկուշոնոկը /ծնվել է 1994 թվականի օգոստոսի 14-ին Բելառուսի Հանրապետությունում, ազգությամբ բելոռուս է, Բելառուսի Հանրապետության քաղաքացի, զոհվածի այրի, բնակվող՝ Բելառուսի Հանրապետություն, Վիտեբսկի մարզ, Բրասլավսկիյ շրջան, ագրոքաղաք Ախրեմովցի, Շկոլնայա փողոց, տուն 40 հասցեում/ և Վլադիմիր Ալեքսանդրովիչ Մարկուշոնոկին /ծնվել է 1955 թվականի սեպտեմբերի 28-ին Բելառուսի Հանրապետությունում, ազգությամբ բելոռուս է, Բելառուսի Հանրապետության քաղաքացի, զոհվածի հայր, բնակվող՝ Բելառուսի Հանրապետություն, Վիտեբսկի մարզ, Բրասլավսկիյ շրջան, գյուղ Ուսյանի, Դվորնայա փողոց, տուն 42 հասցեում/, ինչպես նաև պարզվել է, որ տուժողները չեն տիրապետում հայերեն գրավոր և բանավոր լեզվին, սակայն ազատորեն տիրապետում են ռուսերեն գրավոր և բանավոր լեզվին, իսկ Հայաստանի Հանրապետությունում վարույթի լեզուն գրական հայերենն է, ուստի անհրաժեշտ է վերջիններիս իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու նպատակով անհրաժեշտ է սույն քրեական վարույթով ներգրավվել թարգմանիչ:

Ելնելով վերոգրյալից ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի պահանջներով.

## Որոշեցի

1. Թիվ 69109921 քրեական վարույթով որպես թարգմանիչ ներգրավվել Սոֆյա Սերոբյանին:
2. Որոշման մասին հայտնել՝ Սոֆյա Սերոբյանին:
3. Սոֆյա Սերոբյանին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածով սահմանված թարգմանչի իրավունքները և պարտականությունները, նախազգուշացնել՝ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 503-րդ, 504-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:


Մարզի դատախազության  
ավագ դատախազ



Գ.Գրիգորյան

Ինձ պարզաբանվել են իմ իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացվել եմ ՀՀ քրեական օրենսգրքի 503-րդ, 504-րդ հոդվածով՝ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝



15.09.2022թ.

**ՈՐՈՇՈՒՄ**  
Թարգմանիչ հրավիրելու մասին

24.09.2022թ.

ք.Երևան

Ես՝ ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության պետի տեղակալ Լ.Մանուկյանս, ուսումնասիրելով ՆՈՒԱՐ ԱՐԹՈՒՐԻ ԳՈՑԻՐԻՉԵՐ՝ վերաբերյալ Վրաստանից ստացված հանձնման միջնորդությունը և կից փաստաթղթերը,

**ՊԱՐԶԵՑԻ՝**


22.09.2022թ.ին Վրաստանի գլխավոր դատախազությունից ստացվել է Ն.Ա. ԳՈՑԻՐԻՉԵՐ հանձնման միջնորդությունն ու կից փաստաթղթերը՝ ռուսերեն լեզվով:

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարությունը տարվում է հայերեն, իսկ Սոֆյա Սերոբյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատարանի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ, 61-րդ հոդվածներով,

**ՈՐՈՇԵՑԻ**

1. Ն.Ա. ԳՈՑԻՐԻՉԵՐ հանձնման միջնորդության և կից փաստաթղթերի հայերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով՝ որպես թարգմանիչ հրավիրել Սոֆյա Սերոբյանին (ՀՀ քաղաքացու անձնագիր AS0538862, որակավորումը հաստատող փաստաթուղթ՝ ՀՀ ԱՆ տեղեկանք՝ տրված 27.12.2019թ.) և նրան պարգևատրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքները և պարտականությունները:
2. Թարգմանչին նախազգուշացնել, ՀՀ քրեական օրենսգրքի 503-րդ հոդվածով, 504-րդ հոդվածով առանց հարգելի պատճառների թարգմանություն կատարելուց հրաժարվելու, սխալ թարգմանություն կատարելու համար նախատեսված պատասխանատվության մասին:


ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության պետի տեղակալ



Լ.Մանուկյան

Ինձ պարգևատրվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իմ իրավունքներն ու պարտականությունները: Միաժամանակ նախազգուշացվել եմ առանց հարգելի պատճառների թարգմանություն կատարելուց հրաժարվելու, սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 503-րդ հոդվածով, 504-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝



Ս. Սերոբյան

24.09.2022թ.



ՀՀ ՔՂՕ քաղվածք

Հոդված 61. Թարգմանիչը, նրա իրավունքները և պարտականությունները

1. Թարգմանիչը վարույթի առարկայով չշահագրգռված այն անձն է, որին վարույթն իրականացնող մարմինը հրավիրում է թարգմանություն կատարելու համար: Թարգմանիչ է նաև համրի նշանները հասկացող և խուլի հետ նշաններով բացատրվելու ունակ անձը:

2. Թարգմանիչը պետք է պատշաճ տիրապետի վարույթի լեզվին և այն լեզվին, որից կատարվում է թարգմանությունը:

3. Վարույթի այլ մասնակիցներն իրավունք չունեն թարգմանիչ լինելու:

4. Թարգմանիչն իրավունք ունի՝

1) թարգմանությունը ճշգրտելու համար վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ հարցեր տալու թարգմանության ընթացքում ներկա գտնվող անձանց.

2) ծանոթանալու իր մասնակցությամբ կատարված քննչական կամ այլ դատավարական գործողության արձանագրությանը, ինչպես նաև համապատասխան մասով՝ դատական նիստի արձանագրությանը և թարգմանության գրառումների լրիվության և ճշտության հետ կապված կատարել դիտողություններ.

3) յուրաքանչյուր անգամ ստանալու ապացուցողական կամ վարութային այլ գործողությանը մասնակցելու համար կատարած ծախսերի հատուցում.

4) իրականացնելու սույն օրենսգրքով իրեն վերապահված այլ իրավունքներ:

5. Թարգմանիչը պարտավոր է՝

1) թարգմանություն կատարելու համար ներկայանալ վարույթն իրականացնող մարմնի հրավերով.

2) վարույթն իրականացնող մարմնին ներկայացնել իր որակավորումը հաստատող փաստաթղթերը.

3) դատարանի, ինչպես նաև կողմերի պահանջով դատական նիստի ընթացքում տեղեկություններ հայտնել իր մասնագիտական փորձի և վարույթին ներգրավված անձանց հետ հարաբերությունների մասին.

4) թարգմանությունն ապահովելու համար անհրաժեշտ ամբողջ ժամանակահատվածում գտնվել ապացուցողական կամ վարութային այլ գործողության կատարման վայրում, դատական նիստի դահլիճում և չլքել նշված գործողության կատարման վայրն առանց այն կատարող անձի թույլտվության, իսկ դատական նիստի դահլիճը՝ առանց նախագահողի թույլտվության.

5) թարգմանել լրիվ, ճիշտ և ժամանակին.

6) ստորագրությամբ հաստատել իր մասնակցությամբ կատարված ապացուցողական կամ վարութային այլ գործողության արձանագրությունում թարգմանության գրառումների լրիվությունը և ճշտությունը, ինչպես նաև վարույթի հանրային և մասնավոր մասնակիցներին հանձնվող փաստաթղթերում թարգմանության ճշտությունը.

7) ենթարկվել վարույթն իրականացնող մարմնի կարգադրություններին, եթե դրանք չեն վերաբերում թարգմանության բովանդակությանը, ինչպես նաև առանց վարույթն իրականացնող մարմնի թույլտվության չհրապարակել իր մասնակցությամբ կատարված ապացուցողական կամ վարութային այլ գործողության, ինչպես նաև դռնփակ դատական նիստի ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկությունները.

8) ենթարկվել դատական նիստի կարգին:

(61-րդ հոդվածը լրաց. 09.06.22 ՀՕ-241-Ն)

Թարգմանիչ՝

Ս. Մերոբյան

21.09.2022թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
թարգմանիչ հրավիրելու մասին

27.09.2022թ.

ք.Երևան

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Ռ.Ս.Արսենյանս, ուսումնասիրելով մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 13131419/1 քրեական վարույթի նյութերը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց Ի**

ՀՀ ՔԿ ԵԲԲՎ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական առաջին բաժնում քննված թիվ 13131419/1 քրեական վարույթն՝ ըստ մեղադրանքի Դանիել Քրիստիան Սիմոնեի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 4-րդ կետերով՝ ուղարկվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ ըստ էության քննելու համար:

Գործով մեղադրյալ Դանիել Քրիստիան Սիմոնեն հայերեն գրավոր և բանավոր լեզվին չի տիրապետում, սակայն տիրապետում է ռուսերեն գրավոր և բանավոր լեզվին:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդվածի 4-րդ մասի՝ քրեական դատավարության լեզվին չտիրապետող մեղադրյալին և պաշտպանին հանձնվում են թարգմանչի կողմից ստորագրված մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների հաստատված թարգմանությունները:

Նկատի ունենալով այն, որ թիվ 13131419/1 քրեական վարույթով մեղադրական եզրակացությունն անհրաժեշտ է թարգմանել ռուսերեն, իսկ Սոֆյա Վազգենի Սերոբյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ Վճռաբեկ դատարանի 04.05.2017թ. թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածով, 277-րդ հոդվածի 4-րդ մասով,

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի**

1. Թիվ 13131419/1 քրեական վարույթով մեղադրական եզրակացությունը հայերենից ռուսերեն գրավոր թարգմանելու համար որպես թարգմանիչ հրավիրել Սոֆյա Վազգենի Սերոբյանին (անձնագիր AS0538862, տրված 006-ի կողմից) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:


2. Թարգմանչին նախագրուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական կամ վարչական գործով կամ վարչական վարույթով սուտ բացատրություն տալը կամ քրեական, քաղաքացիական կամ վարչական գործով կամ վարույթով սուտ ցուցմունք կամ փորձագետի կողմից կեղծ եզրակացություն կամ կարծիք տալը կամ թարգմանի կողմից սխալ թարգմանություն կատարելը կամ նոտարի կողմից հրավաքանական նշանակություն ունեցող փաստ հաստատելու գործով վկայի կողմից սուտ ցուցմունք տալը, եթե դա էական նշանակություն է ունեցել գործի լուծման համար կամ խաթարել է գործի կամ վարույթի ընթացքը՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 503-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վկայի կամ տուժողի կողմից ցուցմունք տալուց ապօրինի հրաժարվելը, փորձագետի կողմից առանց հարգելի պատճառների եզրակացություն կամ կարծիք տալուց հրաժարվելը կամ թարգմանի կողմից առանց հարգելի պատճառների թարգմանություն կատարելուց հրաժարվելը՝ դրա համար քրեական պատասխանատվության մասին նախագրուշացված լինելու դեպքում՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը տասնապատիկի չափով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով:

Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների  
դատախազության դատախազ, արդարադատության  
երրորդ դասի խորհրդական՝



Ռ.Ս.Արտւնյան

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածների քաղվածքները, իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 503, 504-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության մասին նախագրուշացված եմ:

Թարգմանիչ՝  
Սոֆյա Սերոբյան



«27» 09. 2022թ.

29.09.2022թ.

ք. Երևան

«Վալիսա Վորոնցով» ընկերության ապրիլի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության պետի տեղակալ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Ս.Ենոքյանս, վերանայելով ապրիլի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչությունում սկսված թիվ 22-189-20 վարույթի նյութերը,

#### ՊԱՐԶԵՑԻ՝

2020 թվականի հոկտեմբերի 7-ին «Վալիսա Վորոնցով» ընկերության ապրիլի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում Սուրեն Վաչիկի Գաբրիելյանին պատկանող գույքի վերաբերյալ սկսվել է թիվ 22-189-20 ուսումնասիրությունը:

Ուսումնասիրության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել ֆրանսերենից հայերեն թարգմանել Շվեյցարիայի իրավասու մարմիններից ստացված փաստաթղթերը:

Նկատի ունենալով վերոգրյալը՝ անհրաժեշտ է որպես թարգմանիչ հրավիրել Մարինե Սամվելի Կարապետյանին (Ա/Վ փաստաթղթի համար՝ AM0783374 տրված՝ 29.06.2012թ., 009-ի կողմից, նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչի վկայական՝ թիվ 63, ֆրանսերեն մասնագիտությամբ):

Մարինե Կարապետյանն ունի համապատասխան կրթություն, ազատորեն տիրապետում է հայերեն և ֆրանսերեն լեզուներին, նրա ձեռնհասությունը կասկած չի հարուցում:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Ապրիլի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 9-րդ և 11-րդ հոդվածներով,

#### ՈՐՈՇԵՑԻ՝

Սուրեն Վաչիկի Գաբրիելյանին պատկանող գույքի վերաբերյալ «Վալիսա Վորոնցով» ընկերության ապրիլի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում սկսված թիվ 22-189-20 վարույթով թարգմանություն իրականացնելու համար հրավիրել թարգմանիչ Մարինե Սամվելի Կարապետյանին (Ա/Վ փաստաթղթի համար՝ AM0783374 տրված՝ 29.06.2012թ., 009-ի կողմից, նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչի վկայական՝ թիվ 63, ֆրանսերեն մասնագիտությամբ):

Սաթենիկ Հայրապետի Հայթյանին նախագգուշացնել «Ապրիլի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի հիման վրա իրականացվող

սասրն տեղեկություններն առանց իրավասու մարմնի թույլտվության հրապարակելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 484-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության պետի տեղակալ

  
S. Ենոքյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սկսած սույն որոշման օրինակը և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի քաղվածքը:

Իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 484-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ



Մարինե Կարապետյան

«29» 09 2022 թ.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

### Թարգմանիչ հրավիրելու մասին

28 սեպտեմբերի 2022թ.

քաղաք Երևան

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազի տեղակալ, արդարադատության առաջին դասի խորհրդական Ա.Գ. Կոստանյանս, ուսումնասիրելով Մոլդովայի Հանրապետության քրեական օրենսգրքի 27-րդ, 46-րդ և 248-րդ հոդվածի 5-րդ մասի «b» կետով (մաքսանենգություն) մեղադրանքով հետախուզվող, **ԱԼԵՔՍԵՅ ՎԻՏԱԼԻԻ ՏԻՈՒՎԻԼԴԻՆԻՆ (АЛЕКСЕЙ ВИТАЛЬЕВИЧ ТЮВИЛЬДИН)** հանձնելու համար կալանավորում կիրառելու վերաբերյալ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի սեպտեմբերի 26-ի № ԵԴ/0930/06/22 որոշումը,

## Պ Ա Ր Ձ Ե Ց Ի՝

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) ոստիկանության Երևան քաղաքի վարչության «Ձվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի աշխատակիցները, 2022 թվականի օգոստոսի 18-ին, Մոլդովայի Հանրապետության (այսուհետ՝ ՄՀ) «Ինտերպոլ» ազգային կենտրոնական բյուրոյի կողմից, այդ երկրի քրեական օրենսգրքի 27-րդ, 46-րդ և 248-րդ հոդվածի 5-րդ մասի «b» կետով (մաքսանենգություն) մեղադրանքով, 2020 թվականի դեկտեմբերի 5-ից հետախուզման մեջ գտնվելու կասկածանքով, «Ձվարթնոց» օդանավակայանի ժամանման սրահում՝ ժամը 11<sup>00</sup>-ին, ձերբակալել են Ռուսաստանի Դաշնության և Ռումինիայի քաղաքացի **ԱԼԵՔՍԵՅ ՎԻՏԱԼԻԻ ՏՅՈՒՎԻԼԴԻՆԻՆ**:

Նույն օրը **ԱԼԵՔՍԵՅ ՏԻՈՒՎԻԼԴԻՆԻ (АЛЕКСЕЙ ТЮВИЛЬДИН)** ձերբակալման վերաբերյալ նախապատրաստված փաստաթղթերը փոխանցվել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազություն:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի օգոստոսի 20-ի № ԵԴ/0831/06/22 որոշմամբ բավարարվել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության միջնորդությունը՝ **ԱԼԵՔՍԵՅ ՏԻՈՒՎԻԼԴԻՆԻ (АЛЕКСЕЙ ТЮВИЛЬДИН)** նկատմամբ 40 (քառասուն) օր ժամկետով ժամանակավոր կալանավորում կիրառելու մասին: (ժամկետը լրանում է 27.09.2022թ. ժամը 11<sup>00</sup>-ին):

ՀՀ գլխավոր դատախազություն 2022 թվականի սեպտեմբերի 7-ին ստացվել է ՄՀ իրավասու մարմինների միջնորդությունը՝ **ԱԼԵՔՍԵՅ ՏԻՈՒՎԻԼԴԻՆԻՆ (АЛЕКСЕЙ ТЮВИЛЬДИН)** այդ երկրի քրեական օրենսգրքի 27-րդ, 46-րդ և 248-րդ հոդվածի 5-րդ մասի «b» կետով քրեական հետապնդման ենթարկելու նպատակով հանձնելու մասին միջնորդությունը և կից փաստաթղթերը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 479-րդ հոդվածի պահանջները պահպանելու, **ԱԼԵՔՍԵՅ ՏԻՈՒՎԻԼԴԻՆԻ (АЛЕКСЕЙ ТЮВИЛЬДИН)** հանձնման գործընթացը կազմակերպելու և իրականացնելու համար անհրաժեշտ է ժամանակ, մինչդեռ 2022 թվականի սեպտեմբերի 27-ին լրանում է նրա նկատմամբ կիրառված

ժամանակավոր կալանավորման ժամկետը, ինչի համար 2022 թվականի սեպտեմբերի 22-ին միջնորդություն էրևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան:

Դատարանի 2022 թվականի սեպտեմբերի 26-ի N° ԵԴ/0930/06/22 որոշմամբ բավարարվել է միջնորդությունը:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության լեզուն հայերենն է:

Հաշվի առնելով, որ **ԱԼԵՔՍԵՅ ՏԻՈՒՎԻԼԴԻՆԸ (АЛЕКСЕЙ ТЮВИЛЬДИН)** չի տիրապետում հայոց գրավոր լեզվին, իսկ Սոֆյա Սերոբյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում ռուսերեն լեզվով թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատականի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով,

### Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. **ԱԼԵՔՍԵՅ ՎԻՏԱԼԻԻ ՏԻՈՒՎԻԼԴԻՆԻՆ (АЛЕКСЕЙ ВИТАЛЬЕВИЧ ТЮВИЛЬДИН)** հանձնելու համար կալանավորելու մասին 2022 թվականի սեպտեմբերի 26-ի N° ԵԴ/0930/06/22 որոշման ռուսերեն հաստատված գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Սոֆյա Վազգենի Սերոբյանին (անձնագիր՝ AS սերիայի թիվ 0538862, տրված 13.05.2019թ., 006-ի կողմից, ՀՀ ԱՆ տեղեկանք՝ տրված 27.12.2019թ.) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ,

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Վարչական շրջանի դատախազի պաշտոնակատար,  
արդարադատության առաջին  
դասի խորհրդական

Ա. Կոստանդյան

Սրացա նույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պարտասխանաբարության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝

*Սոֆյա Սերոբյան*

«...»... 2022թ.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

թարգմանիչ հրավիրելու մասին

4-րդ հոկտեմբերի 2022թ.

ք.Երևան

ՀՀ գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Ռ.Գևորգյանս, ուսումնասիրելով ժուլիեն Մանուգ. Խաչիկի Հիլերեզոյի վերաբերյալ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչությունից մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 8411122 քրեական վարույթի նյութերը,

### Պ Ա Ր Ձ Ե Ց Ի՝

2022 թվականի սեպտեմբերի 28-ին ՀՀ գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունում մեղադրական եզրակացությամբ ստացվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության թիվ 3 բաժնում քննված թիվ 8411122 քրեական վարույթն՝ ըստ մեղադրանքի ժուլիեն Մանուգ. Խաչիկի Հիլերեզոյի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 46-393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 399-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով:

2022 թվականի հոկտեմբերի 3-ին որոշում է կայացվել թիվ 8411122 քրեական վարույթով կազմված մեղադրական եզրակացությունը հաստատելու մասին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի համաձայն՝

1. Վարույթի լեզուն գրական հայերենն է: Բացառությամբ դատարանի և վարույթի հանրային մասնակիցների, յուրաքանչյուր ոք իրավունք ունի վարույթի ընթացքում հանդես գալու այն լեզվով, որին տիրապետում է:

2. Վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ վարույթի լեզվին չտիրապետող մեղադրյալին անհատույց հնարավորություն է տրվում թարգմանչի օգնությամբ իրականացնելու սույն օրենսգրքով սահմանված իր բոլոր իրավունքներն այն լեզվով, որին նա տիրապետում է:

3. Վարույթի լեզվին չտիրապետող համապատասխան անձին սույն օրենսգրքով նախատեսված՝ հանձնման ենթակա փաստաթղթերի պատճենները տրվում են նաև այն լեզվով, որին նա տիրապետում է:

4. Վարույթն իրականացնող մարմնին այլ լեզվով ներկայացված փաստաթուղթը վարույթի նյութերին կցվում է թարգմանչի վավերացրած հայերեն թարգմանության հետ:

Նկատի ունենալով, որ սույն քրեական գործով մեղադրյալ ժուլիեն Մանուգ. Խաչիկի Հիլերեզոն գրական հայերենին չի տիրապետում, այլ տիրապետում է ֆրանսերենին և իր հաշվին թարգմանություն ապահովելու ցանկություն չի հայտնել, ուստի քրեական վարույթով կազմված մեղադրական եզրակացությունը՝ կից հավելվածներով, այն հաստատելու մասին որոշումը հայերենից ֆրանսերեն թարգմանելու ու մեղադրյալին հասկանալի լեզվով նրան հանձնելու և իր բոլոր իրավունքներն իրականացնելու հնարավորություն տալու նպատակով

անհրաժեշտ է որպես թարգմանիչ հրավիրել «Սոֆյա Սերոբյան» ԱԶ-ի թարգմանիչ Մարինե Սամվելի Կարապետյանին (անձնագիր՝ AM0783374, տրված՝ 29.06.2012թ., 009-ի կողմից, ՀՀ արդարադատության նախարարության կողմից անժամակետ տրված վկայական N 63՝ ֆրանսերեն լեզվով թարգմանություն կատարելու հրավույնը ունենալու մասին):

Մարինե Կարապետյանն ունի ֆրանսերեն լեզվի թարգմանչի որակավորում, ազատորեն տիրապետում է հայերեն և ֆրանսերեն լեզուներին, նրա ձեռնհասությունը կասկած չի հարուցում:

Վերոգրյալի հիման վրա և, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և 61-րդ հոդվածով,

### Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Ժուլիեն Մանուգ Խաչիկի Հիլերեզոյի վերաբերյալ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության թիվ 3 բաժնում քննված և մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 84111122 քրեական վարույթով թարգմանություն հրականացնելու համար հրավիրել «Սոֆյա Սերոբյան» ԱԶ-ի թարգմանիչ Մարինե Սամվելի Կարապետյանին (անձնագիր՝ AM0783374, տրված՝ 29.06.2012թ., 009-ի կողմից, ՀՀ արդարադատության նախարարության կողմից անժամակետ տրված վկայական N 63՝ ֆրանսերեն լեզվով թարգմանություն կատարելու հրավույնը ունենալու մասին):

2. Մարինե Կարապետյանին ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածով սահմանված թարգմանչի հրավույններին և պարտականություններին:

3. Մարինե Կարապետյանին նախազգուշացնել քրեական վարույթով առանց հարգելի պատճառների թարգմանություն կատարելուց հրաժարվելու և սխալ թարգմանություն կատարելու համար համապատասխանաբար ՀՀ քրեական օրենսգրքի 503-րդ և 504-րդ հոդվածներով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՀՀ գլխավոր դատախազության բնակչության  
առողջության դեմ ուղղված հանցագործությունների  
գործերով վարչության դատախազ՝



Ռ. Գևորգյան

### Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 503-րդ և 504-րդ հոդվածների քաղվածքները:

Իմ հրավույններն ու պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 503-րդ և 504-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝



Մարինե Կարապետյան

« 04 » 10 2022թ.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

### թարգմանիչ հրավիրելու մասին

5-ը հոկտեմբերի 2022թ.

ք.Երևան

«Վալսալոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Ռ.Գևորգյանս, ուսումնասիրելով Նգույեն Նհատ Կհանհի վերաբերյալ «Վ պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչությունից մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 83154022 քրեական վարույթի նյութերը,

### Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

2022 թվականի սեպտեմբերի 29-ին «Վալսալոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունում մեղադրական եզրակացությամբ ստացվել է «Վ պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության թիվ 3 բաժնում քննված թիվ 83154022 քրեական վարույթն՝ ըստ մեղադրանքի Նգույեն Նհատ Կհանհի՝ «Վ քրեական օրենսգրքի 396-րդ հոդվածի 1-ին մասով և «Վ քրեական օրենսգրքի 399-րդ հոդվածի 1-ին մասով:

2022 թվականի հոկտեմբերի 5-ին որոշում է կայացվել թիվ 83154022 քրեական վարույթով կազմված մեղադրական եզրակացությունը հաստատելու մասին:

«Վ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի համաձայն՝

1. Վարույթի լեզուն գրական հայերենն է: Բացառությամբ դատարանի և վարույթի հանրային մասնակիցների, յուրաքանչյուր ոք իրավունք ունի վարույթի ընթացքում հանդես գալու այն լեզվով, որին տիրապետում է:

2. Վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ վարույթի լեզվին չտիրապետող մեղադրյալին անհատույց հնարավորություն է տրվում թարգմանչի օգնությամբ իրականացնելու սույն օրենսգրքով սահմանված իր բոլոր իրավունքներն այն լեզվով, որին նա տիրապետում է:

3. Վարույթի լեզվին չտիրապետող համապատասխան անձին սույն օրենսգրքով նախատեսված՝ հանձնման ենթակա փաստաթղթերի պատճենները տրվում են նաև այն լեզվով, որին նա տիրապետում է:

4. Վարույթն իրականացնող մարմնին այլ լեզվով ներկայացված փաստաթուղթը վարույթի նյութերին կցվում է թարգմանչի վավերացրած հայերեն թարգմանության հետ:

